14332

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 20 » 10 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0189-23

Ձեռնարկողը՝ ***«ՏՈՒՖԱՐՏ» ՍՊԸ***
Քաղաք Երևան, Ազատության պող. շ. 12/3, բն.25

Գործունեությունը՝ ***Մայակովսկու տուֆերի հանքավայրի «Տուֆարտ» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0189-23

«20» հոկտեմբերի **2023թ.**

Կոտայքի մարզի Մայակովսկու տուֆերի հանքավայրի «Տուֆարտ» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՏՈՒՖԱՐՏ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Մայակովսկի բնակավայր

Ներածական մաս. Կոտայքի մարզի Մայակովսկու տուֆերի հանքավայրի «Տուֆարտ» տեղամասում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների համար ընտրված տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական տարածքում:

Հետախուզվող տեղամասը գտնվում է Արամուս գյուղից 3.5կմ, Ձորաղբյուրից 2կմ, Աբովյանից 4.5կմ և Երևանից 27կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքի մակերեսը կազմում է 6.23հա:

Հայցվող տարածքը ներկայացված է Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի գյուղատնտեսական նշանակության հողամասերով (վարելահողեր, արոտավայրեր, այլ հողատեսքեր):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել տուֆերի պիտանելիությունը բլոկների արդյունահանման համար "Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-стрительных, мемориальных и других изделий" 9479-2011 ГОСТ-ի տեխնիկական պայմաններին համապատասխան:

Ուսումնասիրվող տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ ARM WGS-84 կոորդինատային համակարգով կազմում են:

1	y = 8467943,32	x = 4454925,30
2	y = 8467989,78	x = 4454941,89
3	y = 8468029,55	x = 4454989,91
4	y = 8468039,00	x = 4454980,00
5	y = 8468347,08	x = 4454850,64
6	y = 8468388,14	x = 4454710,48
7	y = 8468327,45	x = 4454690,97
8	y = 8468119,43	x = 4454765,12

Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 5մ խորությամբ 8 հորատանցքերով, ընդհանուր 40մ ծավալով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 90%:

Ընտրված է հետախուզական փորվածքների միջև 60-220մ հեռավորությամբ հետախուզացանց, ինչը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել B կարգով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է նմուշարկել բոլոր հորատանցքերը մինչև 5-ական մետր երկարությամբ նմուշներով:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 132մմ և 112մմ տրամագծերով ինքնագնաց հորատող հաստոցով:

Նախատեսվում է հորատող հաստոցի 8 տեղակայում և տեղահանում: 1-ին խմբի 8 հորատանցքերի հորատումը կիրականացվի ինքնագնաց հորատող հաստոցով:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բնական մերկացումները և փորձնական հանույթի բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում՝ 40գծ. մ
- փորձնական բացահանքի փաստագրում՝ 10գծ. մ
- փաստագրման ընդհանուր ծավալը՝ 50 գծ.մ:

Տուֆերի զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 100խ.մ. ընդհանուր ծավալով, որից 80խ.մ.-ը թարմ չհողմնահարված տուֆերն են: Փորձնական բացահանքի պարամետրերը հետևյալն են՝ երկարություն-10մ, առաջխաղացում-4մ և խորությունը-2.5մ: Նշված աշխատանքների ընթացքում հումքը տեղափոխվելու է Մայակովսկի գյուղ:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 8 հանուկային նմուշ մինչև 5.0 մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, ինչպես նաև 1 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների, 2 նմուշ քիմիական կազմը որոշելու և երկու նմուշ ճառագայթահիգենիկ հատկությունների ուսումնասիրության համար:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների՝ «Անալիտիկ» ՓԲԸ -ի լաբորատորիայում:

Հաշվի առնելով տեղանքի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները՝ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Ուսումնասիրվող տարածքը և անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրիական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար:

Հորատանցքերի և փորձնական բացահանքի անցման ժամանակ հողի վերին շերտը՝ 0,2-0,3մ հզորությամբ, կարճաժամկետ կտրվածքով կուտակվելու է փորվածքի անմիջական հարևանությամբ, իսկ նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո կատարվելու է ռեկուլտիվացիա, ինչպես նաև հորատման հաստոցի տեղակայման վայրերի հողերի փխրեցում: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են ձեռքով: Աշխատանքների իրականացման համար հատկացվելու է 150,0հազ. ՀՀ դրամ:

Բնապահպանական միջոցառումների վրա նախատեսվող գումարը կկազմի 125.5 հազ. ՀՀ դրամ:

Ըստ նախնական գնահատման հայտի հայցվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն հանդիպել:

Երևակման շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Տեղամասի տարածքում, ինչպես նաև հարակից Արամուս և Կամարիս բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Ամենամոտ բնության հուշարձանը գտնվում է երևակման տարածքից մոտ 9կմ հեռավորության վրա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Օգտագործված տեխնիկական յուղերն ու քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Վերամշակող ընկերության հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո:

- Լեռնատրանսպորտային մեքենաների վրա կտեղադրվեն արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքեր:

-Փոշենստեցման նպատակով կիրականացվի ջրցան՝ երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների երկայնքով և փորձնական բացահանքի սահմաններում: Փոշենստեցման նպատակով, խմելու, անձնակազմի կենցաղային և տեխնիկական կարիքների համար օգտագործվող ջուրը մատակարարվելու է պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Արամուս բնակավայրից:

-Կեղտաջրերը հավաքվելու են հորատիպ զուգարանում, ինչը հետագայում պարբերաբար կդատարկվի հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:

- Հրդեհային անվտանգության կանոնների պահպանություն, տարածքում հրշիջման միջոցների առկայություն (բահեր, ավազ, տեխնիկական ջուր, կրակմարիչ):

-Կենցաղային աղբը կհավաքվի առավելագույնը 35լ տարողությամբ աղբի տոպրակներում, պարբերաբար կտեղափոխվի մոտակա աղբանոցներ, որտեղից կոմունալ ծառայության կողմից կտեղափոխվի շրջանի աղբավայր:

Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ:
-Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:
-Ստորերկրյա և մակերևութային ջրերի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:
-Վայրի բնության, կենսամիջավայրի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Մայակովսկու տուֆերի հանքավայրի «Տուֆարտ» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Կոտայքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
-Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող

հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Տուֆարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Մայակովսկու տուֆերի հանքավայրի «Տուֆարտ» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան